



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 օգոստոսի 2017 թվականի թիվ 165-Ա

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈՒԺԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՉԻՆՉԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Չինչինի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2017թ. օգոստոսի 28-ի թիվ 8 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Ա.Հայրապետյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Անդրանիկ Սերյոժայի Հայրապետյանին 2017 թվականի օգոստոսի 30-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Չինչինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱԲՈՎՅԱՆ